ՊԱՇՏՈՆ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ
ԱՇԽԱՏԱՆՔԸ ՍԿՍԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱԺԱՄԿԵՏ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏ

Աշխատավարձային նախագծերի մենեջեր
Լրիվ դրույք
ք. Երևան, ՀՀ
Հնարավորինս շուտ
25/07/2024
09/08/2024
Անժամկետ՝ 3 ամիս փորձաշրջանով

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ- ն փնտրում է փորձառու և մոտիվացված թեկնածուի, ով կմիանա բանկին որպես Աշխատավարձային նախագծերի մենեջեր, ստորև ներկայացված պարտականությունները կատարելու նպատակով:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Նոր հաճախորդների ներգրավման աշխատանքներին աջակցություն,
- Պոտենցիալ հաճախորդների համար վաճառքի վերաբերյալ շնորհանդեսների կազմակերպում,
- Բանկի ֆիզիկական անձ հաճախորդներին վաճառվող պրոդուկտների/բանկային ծառայությունների ծավալների ավելացմանն ուղղված միջոցառումների կազմակերպում,
- Վաճառքի ցուցանիշների ամփոփում և հաշվետվությունների ներկայացում
- Աշխատավարձային նախագծերի մոնիթորինգ
- Աշխատավարձային նախագծի շրջանակներում պատվիրված քարտերի տրամադրման պրոցեսի կազմակերպում և իրականացում Բանկի տարածքից դուրս
- Խաչաձև վաճառքներ
- Վաճառքների նոր սխեմաների և գործիքների նախաձեռնում, կիրառում
- Համագործակցությունների ամրապնդմանը և ընդլայմանը միտված միջոցառումների կազմակերպում:

ՊԱՀԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- Բարձրագույն կրթություն
- Բանկային համակարգում աշխատանքային փորձը կդիտվի որպես առավելություն
- Բանկային գործունեության, բանկային պրոդուկտների և ծառայությունների իմացություն
- Բանկային օրենսդրության իմացություն
- Մարքեթինգի բավարար իմացություն
- MS Office ծրագրային փաթեթի լավ իմացություն, հատկապես PowerPoint
- Նախաձեռնողականություն և ինքնուրույնություն
- Հայերեն և ռուսերեն լեզուների գերազանց, անգլերենի՝ լավ իմացություն
- Հաղորդակցման հմտություններ
- Կազմակերպչական հմտություններ
- Վաճառքի հմտություններ
- Խնդիրների արագ և արդյունավետ լուծման կարողություններ
- Թիմում արդյունավետ աշխատելու ունակություն
- Ճշտապահություն և պատասխանատվության զգացողություն
- Գործարար էթիկայի նորմերի իմացություն և դրանց կիրառում

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Փորձաշրջանի բարեհաջող ավարտից հետո Բանկն իր աշխատակիցներին առաջարկում է արտոնությունների լայն փաթեթ, մասնավորապես, բժշկական ապահովագրություն, պարգևատրման ճկուն համակարգ, սպորտակումբների ծառայություններից օգտվելու կորպորատիվ փաթեթ, արտոնյալ պայմաններով բանկային ծառայություններ և այլն:

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Եթե ձեր գիտելիքները, մասնագիտական փորձն և որակավորումները համապատասխանում են վերը նշված հաստիքի պահանջներին և և դուք հետաքրքրված եք միանալու ԱյԴի Բանկի թիմին՝ անցեք հետևյալ հղումով https://idbank.bamboohr.com/careers/70 : Հարցազրույցի կհրավիրվեն նախնական ընտրությունը անցած դիմորդները:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«ԱյԴի Բանկը» հիմնադրվել է 1990թ.-ին «Անելիք Բանկ» անվանումով, իսկ 2018թ. Հունիսի 4-ից Բանկը ներկայանում է «ԱյԴի Բանկ» անվանումով:
ԱյԴի Բանկի առաքելություն է լինել առաջին ընտրության Բանկ հաճախորդների համար որպես լավագույն նորարար Բանկ՝ հաճախորդներին տրամադրելով անհատական մոտեցմամբ արդիական թվային լուծումներ: Բանկի մասին հավելյալ տեղեկատվության համար կարող եք այցելել Բանկի պաշտոնական կայքը https://www.idbank.am/: